## ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի շնորհավորական ուղերձը Հաղթանակի և խաղաղության տոնի առիթով

Սիրելի՛ սյունեցիներ,

Հպարտությամբ ու առանձնակի սիրով շնորհավորում եմ ձեզ Հաղթանակի և խաղաղության տոնի կապակցությամբ:

Մայիսի 9-ը հայ ժողովրդի  համար թանկ է Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակով և Շուշիի փառապանծ ազատագրմամբ:

Երկրորդ աշխարհամարտի տարիներին վեց հարյուր հազար հայեր կռվել են ֆաշիզմի դեմ՝ բարձր պահելով հայ ռազմիկի և հայ ժողովրդի պատիվն ու անունը: Հանուն հաղթանակի և խաղաղության  երեք հարյուր հազար հայ հերոսաբար ընկել է ռազմի դաշտում՝ ապահովելով հայ ժողովրդի անվտանգ գոյությունը:

Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակում իրենց արժանի ավանդն են ներդրել  նաև Սյունիքի զավակները: Կապանի, Գորիսի, Սիսիանի և Մեղրիի շրջաններից պատերազմին մասնակցել է քսան  հազար հայորդի: Մարտերում  ցուցաբերած բացառիկ խիզախության համար 12  սյունեցի արժանացել է Խորհրդային Միության  հերոսի, յոթը՝ գեներալի կոչման:

Սյունիքի զավակներն իրենց կատարած  սխրանքներով ու արիությամբ աչքի են ընկել բոլոր ռազմաճակատներում և զորատեսակների կազմում:

Սյունեցիները իրենց սխրանքներով աչքի ընկան ոչ միայն ռազմաճակատում, այլև հաղթանակին նպաստեցին թիկունքում կատարած իրենց հերոսական աշխատանքով:

Պատերազմում հաղթանակած հերոսների օրինակով դաստիարակված երիտասարդ սերունդը հանձն առավ կերտելու մեր ինքնիշխան պետությունը:

Անկախ Հայաստանի Հանրապետության նորօրյա պատմության մեջ մարտնչող ազգի ոգու ու հաղթանակների պսակը Շուշիի ազատագրումն էր: Այդ հաղթանակն ամբողջ աշխարհին ապացուցեց, որ հայն իր պատմական հայրենիքը պաշտպանելու աներեր կամք ունի և վաստակեց անկախ ու արժանապատիվ ապրելու իրավունք:

Արցախյան պատերազմում տարած հաղթանակն  այդքան փառահեղ չէր լինի, եթե զենք չվերցներ ազգի ճակատագրով մտահոգ երկրապահը: Մայիսի 8-ին մեր ժողովուրդը

երախտապարտ շնորհակալությամբ նշում է նաև Հայաստանի երկրապահ կամավորների միության օրը:

Մայիսը հավերժորեն մտել է մեր ժողովրդի հավաքական հիշողության մեջ, դարձել անցած ճանապարհի ուղեցույց և գալիք պայքարների ոգեղեն հիմք:

Սյունեցիներն իրենց գլուխն են խոնարհում մեր բոլոր այն քաջերի հիշատակի առջև, ովքեր կյանքով ու հերոսացմամբ մեզ պարգևել են մայիսյան հաղթանակներ ու խաղաղություն:

Խոնարհվում եմ մայիսյան հաղթանակներ կերտած և մեզ խաղաղություն պարգևած հերոսների անմար հիշատակի առջև:

Փա՜ռք մեր հերոսներին:

ՀՀ Սյունիքի մարզպետ Ս. Խաչատրյան